

Ինքն ալ կը հաւատայ թէ Նիկոպոլիս՝ Մակաբայեցւոց հին եմմաւուսը Ու. Ղուկասի եմմաւուսն է։ Այս խօսքը կ'ըսէ հարեանցիօրէն։ Այն աւանդութիւնը որուն վրայ կը պնդէ ան՝ որ այս անունը իր գրչին տակ բերած է, աւանդութիւնն էր այն ջրհորին որուն ջուրը հրաշքներ կը գործէր Յիսուսի հոն գալէ ի վեր։

Ստուգիւ ահաւասիկ յարգելի աւանդութիւն մը. Սոգոմէն, պաղեստինցի, թերևս Գազայի մէջ ծնած, փաստաբան Պէրութի մէջ, լուրջ հեղինակ մը, կը հաղորդէ այս իրողութիւնը մեր հաւատքին իբր հաստատութիւն։

Ուրեմն ի սրտէ ընդունինք այս աւանդութիւնը, բայց այս պարագային տակ. Յիսուս տակաւին կ'ապրէր իր մահկանացու կեանքով, անկէ կ'անցնէր իր աշակերտներով, լուացած էր իր ոտքերը։ Այս պարագան կապակցութիւն չունէր զատկական երեւումին հետ(\*)։

Այս իրողութիւնը լաւ պէտք է նկատի առնել, չառ մը աւանդութիւններ յառաջ եկած են անկէ։

Եմմաւուս-Նիկոպոլիսէն՝ աստուածաշնչական քաղաք, Յիսուս անցած էր, հրաշալի ջրհոր մը կը պահէր այս յիշատակը։ Բաց աստի, Աւետարանը կ'ըսէ թէ եմմաւուսի ճանապարհին վրայ Յիսուս երեւցած

(\*) Սոգոմէն կը գրէ. «Այս բաղափն **Բառուղիին** առջեւ, Յիսուս իր յարութենէն յետոյ գալով իր երկու առաւելներուն հետ, ուրոնց մին Կղեպա՝ ուղեց հրաժեշտ առնել ուրիշ բաղափ երթալու անապարհով. հոն առողջաբար աղբիւր մը կար, ուր զանազան հիւանդութիւն ունեցող մարդիկ եւ անասուններ կը մաքրուէին իրենց հիւանդութենէն, վառն գի, կ'ըսուի թէ Քրիստոս իր առաւելներուն հետ ճանապարհորդութեան ճեղէ մը այս աղբիւրը գալով լուաց իր ոտքերը եւ նոյն փուրը այն ժամանակէն սկսեալ ստացու հիւանդութիւններ բժշկելու զօրութիւնը» (P. G. LXVII, col. 128)։